ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՆԱԿԱՆ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԳԵՄԱՏՐԻԱՆ ՉՈՐՍ ԴԱՐ ԱՌԱՋ՝ «ՄՀԵՐԻ ԴՌԱՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՍՏՎԱԾՆԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՐԲԱՁԱՆ ԹՎԵՐԻ ՀԵՏ

ՀՏԴ 941(479.23)

Արթուր Արմին (Բաբայան Արթուր)

«ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» հետազոտական կենտրոնի հայագիտական բաժնի ղեկավար
annterfilms@sbcglobal.net[*]

Հնում՝ Շումերում, Եգիպտոսում, Միջագետքում և Հին Հունաստանում օգտագործվել են որոշակի թվով ծավալածներ՝ օրացուցային համակարգի մաթեմատիկական և երկայնական նախշերով, որոնք համարվում են հիմնական, իսկ տաճարների և ծիսային կառույցներում, դրանց օգտագործումը պարտադիր (բանաձևային) պայման է՝ բխող կրոնական գլոբալացումից. հունական հեմատրիայում՝ գլխավոր աստվածների անունների՝ թվային արժեքները, ներկայացված են Վանի թագավորության «Միհրի դուռ» գրության մեջ ավելի քան չորս դար առաջ որպես զոհաբերությունների համար՝ ցուլերի և ոչխարների թվեր, որոնք վերջնականապես բացահայտվում են որպես լուսնի և արևի տարվա մաթեմատիկական և դրամագիտական օրեր և ամիսների հետ կապված օրինաչափություններ:

13, 33, 43, որոնց հարթ նկարը լիովին համապատասխանում է Patnosu, Kayahedra, Չավուշթեփե, Չավուշթե-պե-Իրմա Վանի թագավորության: Շինիի, Ալտինտեպեի, Այանիսի, Թոփրաքքալեի տաճարների ծրագրերը, որոնք երկու քառակուսիների (շեղանկյունների) համադրությամբ կառույցներ են հավասար կողմերի հետ, մեկը մյուսի ներսում, մեծ ու փոքր:

Հին բաբելոնացիներն ունեցել են «X» չափման միավոր Սիդի կոչվող քառակուսու կողմի համար և օգտագործել են «Մեհր» տերմինը՝ քառակուսին նշելու համար, X2 : Sidi հրապարակում կառուցված հրապարակի կողմը որոշվում էր mehr: sidi2 = mehr.

Schumerian - ը sid (i), որը կոչվում է HNKH, St արմատով, ըստ ist-ի, կա հայկական «տեղ» բառը, իսկ mehr-ը, որի բազմակի MEHRNER-ը, կլինի հայերեն «Մեհր-Իան» , այսինքն ՝«մեհյան» բառն ըստ հայերենի ճշտության:

Իրականում Ուրարտական տաճարների՝ խորանի, տաճարի, համալիրի ուրվագծերը երեք քառակուսիների հանրագումար են, ինչն էլ «ՄՈՐԹԵԱՆ» է, և «մեխիան» բառի ստուգաբանությունը գալիս է այս մաթեմատիկական տերմինից, որտեղ հնդեվրոպական

---

[*] Հոդվածը ներկայացվել է 16.08.2022:
Տպագրության է երաշխավորել բ.գ.թ., Վ.Բրյուսովի անվան պետական համալսարանի դոցենտ՝ Հ.Հակոբջանյանը: 23.08.2022:
Հոդվածը տպագրության է ընդունվել 31.08.2022:

chale լեզուն է «Meh - լուսին» ձևը նույնպես օգտագործվել է որպես ժամանակի և տարածության չափման միավոր:

Բանալի բառեր՝ Միերի դուռ, տաճար, հունական գեոմետրիա, Վանի թագավորություն, Հալդիի դարպասներ, ցուլ, խոյ, պարագիծ

Ներածություն

Հնագույն ժամանակներում թե՛ Շումերում, թե՛ Եգիպոսում, թե՛ Միջագետքում, թե՛ Հին Հունաստանում, կիրառվել են որոշակի թվեր, ծավալաձևեր, օրացույցային համակարգեր և մաթեմատիկական ու երկարչափական օրինաչափություններ, որոնք համարվել են սրբազան, և տաճարների ու սրբազան շինությունների համար դրանց օգտագործումը եղել է կրոնական աշխարհաճանաճողությունից բխած պարտադիր (կաղապարային) պայման: Հունական գեոմետրիայով գլխավոր աստվածների անունների թվային արժեքներն ավելի քան չորս դար առաջ ներկայացված են Վանի թագավորության «Միերի դռան» արձանագրության մեջ որպես ցուլերի և խոյերի զոհաբերությունների թվաքանակներ, որոնք վերջնականապես բացահայտվում են որպես մաթեմատիկական և տոմարագիտական՝ լուսնային և արեգակնային տարվա օրերի ու ամիսների հետ առնչվող օրինաչափություններ:

Գրականության ակնարկ և մեթոդաբանություն

Գեոմետրիայի կիրառման ամենահին վկայությունը մեզ հասել է Բաբելական սալիկի արձանագրությունից՝ մ.թ.ա.720 թ., Սարգոն II-ի պատվերով իր անվան թվային արժեքով Խորսաբադի պատի երկայնքի՝ 16,283 կուբիտ չափով կառուցման մասին[1]: Սակայն, ***«աստվածները՝ որպես թվային արժեքներ»*** մոտեցումը հայտնի է դեռևս շումերական արձանագրություններից, որտեղ դիցերն ունեին իրենց թվային արժեքները՝

ԱՆ = 60, ԷՆԼԻԼ = 50, ԷԱ = 40, ՍԻՆ = 30, ՈՒԹՈՒ = 20, ԻՇԿՈՒ = 10:



Հնարավոր ենք համարում, որ շումերական աստվածների թվային արժեքները նույնպես ունեցել են երկրաչափական ներկայացումներ: *Վեցանկյուն, հնգանկյուն, քառանկյուն, եռաչափ եռանկյուն, շեղանկյուն և եռանկյուն:* Վեց երկարաչափական պատկերները լիովին համապատասխանում են շումերական թվերի գրման և վեց գլխավոր աստվածների թվային արժեքների հետ: Շումերական գրավոր համակարգում «10» թիվը գրվում էր եռանկյուն խոփի տեսքով՝ Δ , և գրվում էր 45^0 թեքությամբ. օրինակ 30 թիվը գրվում էր այսպես՝ : Եվ ահա, հնարավոր ենք համարում, որ շումերական աստվածների թվային արժեքների «գաղտնիքն» ունի հետևյալ բացատրութ-

[1] Farbridge M. H., “Studies in Biblical and Semitic Symbolism”, 2007, p. 94.

յունը՝ վերևի երկրաչափական պատկերները ոչ պատահականորեն հիշեցնում են «պլատոնական սոլիդներ»[1] անունով հայտնի *(այն կար Պլատոնից հազարամյակներ առաջ)*[2] ***ջուր-իկոսահեդրոն, եթեր-դոդեկահեդրոն, հող-խորանարդ, օդ-օկտահեդրոն, հուր-տետրահեդրոն*** համադրումները: Հին հավատամքների միֆական պատումներում յու-րաքանչյուր աստված կատարում էր մեկ գործառույթ, որն աղերսվում էր՝ ջրի, հրի, օ-դի և այլն, նյութի որևէ վիճակի հետ, որոնցով իբր կառուցված էր գոյաբանական աշ-խարհը[3]: Եվ պատահականության արդյունք չի կարող լինել «Միերի դռան» արձանա-գրության մեջ շումերական արևի աստծո անվան գաղափարագրի օգտագործումը կամ ուրարտական լուսնի աստծուն շումերական թվային արժեքով ներկայացնելը՝ ***^{d}UTU = ^{d}XX, = Արևի աստված, ^{D}ZU = ^{d}XXX = Լուսնի աստված***[4]**:** Պարզ տրամաբանու-թյունը հուշում է, որ դեռևս հնագույն ժամանակներից պահպանված և դպրոցից դպրոց փոխանցվող *(տաճարից տաճար գաղտնի ու բանավոր փոխանցվող)* գիտելիքն ունե-ցել է անընդհատականություն: Եվ անկախ նրանից, թե մեր օրերի համար որքան ան-հեթեթ կարող են թվալ՝ ***ԱՍՏՎԱԾ = ԹԻՎ = ԱՍՏՂԱՏՈՒՆ*** համադրումները, մեր ժամա-նակների հետազո-տողը պետք է ընդունի, որ այն եղել է հին հավատամքային աշխար-հաճանաչողության սրբազան կանոն, որն իմպրովիզացիաներով փոխանցվել ու տեղ է գտել Միհրականության ու նաև քրիստոնեության մեջ[5]:

Վերլուծություն

ԳԵՄԱՏՐԻԱ. Միերի դռան» արձանագրության մեջ դիցերի համար սահմանված զո-հաբերու-թյունների թվաքանակները կարծես նույնությամբ կրկնում են հին հունական աստ-վածների անունների ***գեմատատրիայով*** պայմանավորված թվերը:

«Հալդիի դարպասներ» կամ ՄՀԵՐԻ ԴՈՒՌ անունով հայտնի ժայռի արձանագրութ-յան մեջ զոհաբերվող խոյերի և ոչխարների ընդհանուր թվաքանակը՝ 353 է, որը հունա-կան գեմատրիայում ՀԵՐՄԵՍԻ թիվն է: Ցուլերի և կովերի ընդհանուրը՝ 106 է, որը հու-նական գեմատրիայում տաս անգամ բազմապատկմամբ Ապոլոնի թիվն է՝ 1060: «Միերի դռան» արձանագրությունում միայն խոյերի զոհաբերման ընդհանուր թվաքանակը 318 է, իսկ հունական գեմատրիայում դա ՀԵԼԻՈՍԻ թիվն է: ՀԱԼԴԻԻ համար սահմանված 17 ՑՈՒԼՆ ըստ հունական գեմատրիայի՝ միտում է Զևսի 612 թվային ար-ժեքը՝ 612 = 4 x 153, իսկ 1-ից մինչև 17 թվերի գումարը՝ 153 է, որի քառապատիկը նույնպես 612 է:

Զարմանալին այն է, որ հունական պանթեոնի աստվածների անունների գեմատ-րիայով՝ թվային արժեքներով ներկայացումը, վերագրվում է մ.թ.ա. 5-րդ դարից հետո ժա-մանակին, քանի որ աթենացիները ***հոնիական*** այբուբենն ընդունեցին մ.թ.ա. 403 թվակա-

---

[1] Plato, “Timaeus”, trs. Taylor T., Minneapolis, 1975.

[2] Բրիտանիայում, Աշմոլինի թանգարանում գտնվում են նեոլիթյան ժամանակի մարդու կողմից պատրաստված 5 սոլիդները:

[3] Ավելի մանրամասն տես՝ Ա. Արմին, «Հնագույն հեթանոսական Աստվածաշունչ՝ Սասնա Ծռեր էպոսը», 2007, և Ա. Արմին, «Միերի դուռ. հնագույն համակարգը որպես տիեզերքի կառուցք», 2008 աշխատությունները:

[4] Krebernik M. (1993), "Mondgott A. I. In Mesopotamien", p. 361, “Reallexikon der Assyriologie retrieved, 2022-02-08.

[5] Stirling William, ″The Canon″, USA, 2014.

նին[1], իսկ «Միերի դռան» արձանագրությունն առնվազն 400 տարի ավելի հին է *(մ.թ.ա. 9-րդ դար):* Հին հունական աստվածների անունները Հոմերոսի մոտ ունեն տարբեր տառահնչյունային ներկայացում. հույն բանաստեղծ Սիմոնիդեսը (մ.թ.ա. 556 – 467թթ.), որը Պյութագորասի ժամանակակիցն էր, գրում է, որ էպսիլիոն (E), էթա (H), ուպսիլիոն (Y) և օմեգա (Ω), տառերը Պյութագորասն է մտցրել Աթենական այբուբեն[2]: Եվ փաստորեն, հունական աստվածներ՝ Զևսի, Հերմեսի, Ապոլոնի, Հելիոսի անունների գեմատրիայով թվային արժեքները մ.թ.ա. 5-րդ դարից հետո են ՀԱՐՄԱՐԵՑՎԵԼ վերոնշյալ թվային արժեքների հետ: Հավանական է, որ աստվածների թվային արժեքները հունական կանոնում մի ամբողջ դպրոցի կողմից «հեղափոխական» ներդրման արդյունք է, և ամենակարևորը՝ դրսից ներկրված փոխառություն է:

Անտիկ հունական և հետագայում քրիստոնեական աստվածաբանության մեջ գեմատրիայի՝ որպես «սրբազան կանոնի» մասին աշխատությունները բազմաթիվ են[3]: Եվ քանի որ հունական համակարգից առնվազն չորս դար ավելի հին «Միերի դռան», արձանագրությունում, առկա են հունական աստվածների անունների գեմատրիայով պայ-մանավորված սրբազան թվերը, ապա հարկ ենք համարում անրադառնալ այս զարմանալի փաստերի թվացյալ «զուգադիպությանը»:

Հունական այբուբենի 27 տառերն ունեն նաև թվային արժեքներ

Α	alpha	1	Ι	iota	10	Ρ	rho	100
Β	beta	2	Κ	kappa	20	Σ	sigma	200
Γ	gamma	3	Λ	lambda	30	Τ	tau	300
Δ	delta	4	Μ	mu	40	Υ	upsilon	400
Ε	epsilon	5	Ν	nu	50	Φ	phi	500
F	digamma	6	Ξ	xi	60	Χ	khi	600
Ζ	zeta	7	Ο	omicron	70	Ψ	psi	700
Η	eta	8	Π	pi	80	Ω	omega	800
Θ	theta	9	Ϙ	koppa	90	Ϡ	sampi	900

[1] Diringer D., The Alphabet: A Key to the History of Mankind, UK, 1996, p. 458.

[2] Տես՝ Simonides in Anthon, “Anthon’s Classical Dictionary” հոդվածը, 1239-40: Նաև՝ “Lyra Graeca”, vol. 2, Loeb Classical Library. Նաև՝ Hyginus, “The Myths of Hyginus”, p. 277.

[3] William Stirling, “The Canon”, USA, 2014, Jhon Michell, “City of Revelation”, London, 1972, Fideler David, “Ancient Cosmology and Early Christian Symbolism”, Wheaton, IL, 1993.

Հելիոս՝ ΗΛΙΟΣ = 8 + 30 + 10 + 70 + 200 = 318



«Միերի դռան» արձանագրության մեջ խոյերի ընդհանուր թվաքանակը 318 է, ցուլերինը՝ 100: Այսինքն, 318 խոյը՝ որպես շրջանագծի տրամագիծ, ձևավորում է շրջանի պա-րագիծը, որն արտահայտվում է 100 ցուլ թվային արժեքով **(318 x π = 999 ≈ 1000):** Հարյուր, կամ հազար՝ խորհուրդը նո՞ւյնն է. Հալդիի դիցարանում ցուլերի թվաքանակը 10 անգամ կրճատված է, քանի որ ամեն տարի հազար ցուլի զոհաբերությունը կլիներ դժվար իրագործելի: Հայտնի է, որ արևի հնագույն խորհրդանիշը եղել է շրջանը՝ կենտրոնի կետով, որն օգտագործվել է հայ միջնադարյան մատենագրությունում: Եվ այն նաև ներկայացնում է «ամբողջի» գաղափարը: 1000 թիվը՝ «հազարաշեն», նաև հիշեցնում է հայկական շինությունների երդիկավոր ծածկի կառուցվածքը, որը ծածկի տակ է առնում ամբողջ շինությունը:

Հերմես՝ ΕΡΜΗΣ = 5 + 100 + 40 + 8 + 200 + = 353



«Միերի դռան» զոհաբերությունների ցանկում խոյերի թվաքանակը 318 է, իսկ երբ այդ թվին ավելանում է աստվածուհիների համար սահմանված 35 ոչխարների թվաքանակը, ապա արդյունքը դառնում է՝ 353 խոյ/ոչխար, որը արձանագրությունում ներկայացված բոլոր խոյերի և ոչխարների ընդհանուր թիվն է: Հունական դիցաբանու-թյունում Հերմեսի և Աֆրոդիտեի միության արդյունքում ծնված որդին ուներ արական և իգական բնություն: «Միերի դռան» արձանագրության մեջ բոլոր խոյերի և ոչխարների ընդհանուր թվաքանակը 353 է: Կից գծագրում՝ Հելիոսի 318 թվին երբ ավելանում է դիցուհիների համար սահմանված 35 ոչխարը, ապա այն դառնում է Հերմեսի 353 թիվը: Լուսնային տարին մի շարք հնագույն ժողովուրդների լուսնա-արեգակնային օրացույց-ներում տատանվել է՝ 353, 354, 355 օր տևողությամբ[1]:

Զևս՝ ΖΕΥΣ = 7 + 5 + 400 + 200 = 612



«Միերի դռան» արձանագրության մեջ ՀԱԼԴԻ գերագույն աստվածությանը զոհաբերվում է 17 ցուլ: 1-ից մինչև 17 թվերի գումարը՝

1 + 2 + 3 + ... + 17 = 153; 4 x 153 = 612:

Թիվ 612-ից է «բխում» թիվ 353-ը, երբ կիրառում ենք √3-ը՝ 612 ÷ √3 ≈ 353: «Միերի դռան» արձանագրության մեջ խոյերի և ոչխարների ընդհանուր զոհաբերությունների թվաքանակը 353 է:

Զևսը նաև 612 ամսիների (յուրաքանչյուրը 30 օր) օրերի թիվն է, որը Միերի դռան արձանագրության մեջ 11 օր տարբերությամբ 106 դրակաոնական կիսամյակներն արտահայտող ամբողջի գաղափարն է՝

(612 ամիս x 30 օր = 18360 օր + 11 օր = 18371օր = 106 դրակոնական կիսամյակ):

ԱՊՈՂՈՆ՝ Ἀπόλλων = 1060՝ հունական գեմատրիայում Ապոլոնի թիվն է

«Միերի դռան» արձանագրությունում զոհաբերվող ցուլերի և կովերի ընդհանուր

[1]Explanatory Supplement to the Astronomical Almanac, US Naval Observatory, 2006, p. 596.

թվաքանակը 106 է *(100 ցուլ + 6 կով = 106 ցուլ/կով):* 106 կամ 1060 թիվը հարաբերվում է Հալդիի (կամ Զևսի) 612 թվային արժեքի հետ՝ 106 ÷ √3 = 61.2: 612 x 10 = 612, որը Զևսի *(նաև Հալդիի թիվն է. տես վերևում):* Վերևում ընդգծեցինք, որ զոհաբերվող ցուլերի թվաքանակը կրճատված է՝ 1000-ի փոխարեն գրված է 100, թեև խորհուրդը նույնն է: Նմանատիպ կերպով են վարվել նաև զոհաբերվող ցուլերի և կովերի ընդհանուրը թվաքանակի հետ *(100 ցուլ + 6 կով = 106՝ կրճատված է 10 անգամ. այն պետք է լինի՝ 1060):* Այսինքն, ամեն Նոր Տարվա ծիսակատարության ժամանակ 1060 գլուխ խոշոր եղջրավոր կենդանինե-րի զոհաբերությունն անհրաժեշտ կլիներ: Այսպիսով, 1060 √3-ի հետ հարաբերվելով դառնում է Զևս/Հալդիի թիվը՝ 1060 ÷ √3 ≈ 612: «Միերի դռան» արձանագրությունից չորս դար հետո Զևսին ու Ապոլոնին նվիրված տոնակատարու-թյունների ժամանակ ցուլերի զո-հաբերությունների թվաքանակները նույնպես կճատված են 10-ն անգամ, ինչպես Վանի թագավորությունում է եղել[1]:

Միերի դռան» արձանագրությունում կենդանիների զոհաբերությունների սահմանված թվաքանակները չէին կարող լինել իռացիոնալ թվեր, դրանք պետք է լինեին կլորացված ամբողջ թվեր. օրինակ՝ π = 3. 1415. . . ցուլի զոհաբերություն չէր կարող լինել: Եվ արձանագրության հեղինակները՝ քրմերը, պահպանելով աստվածների հետ աղերսվող թվային խորհուրդը *(լուսնային տարվա օրերի թվաքանակ, լուսնի կամ արևի պարբերական խավարման օրերի կամ տարիների շրջափուլեր և այլն),* կենդանիների զոհաբերությունների թվաքանակները ներկայացրել են որպես կլորացված ամբողջ թվեր:

Փաստորեն, հունական գեմատրիայով աստվածների անունների թվային արժեքները մենք տեսնում ենք ավելի քան չորս դար առաջ Վանի թագավորության «Միերի դուռ» անունով կոչված արձանագրության մեջ, որտեղ՝

ՀԵԼԻՈՍԻ թվային արժեքը ***խոյերի*** ընդհանուր զոհաբերությունների քանակն է՝ 318,

ՀԵՐՄԵՍԻ թվային արժեքը ***խոյ + ոչխար,*** ընդհանուր քանակն է՝ 353,

ԱՊՈԼՈՆԻ թվային արժեքը՝ ընդհանուր ցուլ + կով զոհաբերությունների քանակն է՝ 106 (1060),

ԶԵՎՍԻ թվային արժեքը 4 անգամ 1-ից մինչև 17 թվերի գումարն է՝ 4 x (1 + 2 + 3 + . . . + 17) = 612:

Մաթեմատիկական եվ երկրաչափական օրինաչափություններ

— Արձանագրության մեջ Հալդիին զոհաբերվում է 17 ցուլ, Թեյշեբային՝ 6 ցուլ, Շիվինիին՝ 4 ցուլ: Նախորդ թվի նկատմամբ հարաբերությունների արդյունքում՝

4 ÷ 6 = 0.666,

6 ÷17 = 0.353,

ստացվում է՝ զրո ամբողջով արևի մոգական քառակուսու 0. 666 թիվը, և զրո ամբողջով լուսնային տարվա օրերի թիվը 1-ով պակաս՝ 0. 353, որոնց գումարը մոտ մեկ ամբողջ է՝ 0. 666 + 0. 353 ≈ 1:

[1] Jones Peter, Homer's Odyssey: a companion to the English translation of Richmond Lattimore, Bristol: Bristol Classical Press. 1988, p. 5.



— Եթե Հալդին շրջանագծի շառավիղն է, որին զոհաբերվում է 17 ցուլ (R = 17), ապա նրանից է «բխում և ձևավորվում» բոլոր աստվածներին զոհաբերվող ցուլերի և կովերի ընդհանուր 106 թվաքանակը: «Միերի դռան» արձանագրության մեջ բոլոր ցուլերի և կովերի ընդհանուր զոհաբերություն-ների թվաքանակը 106 է:

Շրջանագծի պարագիծը «ամբողջի» գաղափարն է՝ 106 ցուլ/կով = C = 2R x π = 106. 76 ≈ 106 (R = 17 ցուլ):

— Եթե շրջանագծի շառավիղը՝ R հավասար է 106 ցուլ/կով-ի, ապա շրջանագծի C պարագիծը մոտավորապես հավասար կլինի 666-ի, որն արևի մոգական քառակուսու թիվն է՝ հավասար է 1-ից մինչև 36 հաջորդական թվերի գումարին:

— Եթե շրջանագծի շառավիղը՝ R հավասար է 31.8-ի, ապա շրջանագծի պարագիծը՝ C մոտավորապես հավասար է 100-ի: Եթե R = 318, ապա C ≈ 1000:

— 106 ցուլ/կով թիվը 3 անգամ բազմապատկելով դառնում է՝ 318 խոյերի ընդ հանուր թվաքանակ (106 x 3 = 318):

— 353 խոյ/ոչխար թվաքանակը բազմապատկելով 3 անգամ, դառնում է 1060, որը 106 ցուլ/կով թվաքանակի տասնապատիկն է (1060 ÷ 353 ≈ 3):

— «Միերի դռան» արձանագրության մեջ, աստվածներին զոհաբերվող կենդանիների ընդհանուր թվաքանակները նաև «բխում» են իրարից √3-ի հիմքով՝

1060 ÷ √3 ≈ 612;

612 ÷ √3 ≈ 353:

Եվ, Աշոտակերտում գտնվող «Հալդիի դռան» բարձության և լայնության չափերի փոխհարաբերության համար կիրառել են √3-ը[1]:

— «Միերի դռան» արձանագրության մեջ խոյերի և ոչխարների ընդհանուր զոհաբերությունների թվաքանակը 353 է: $\sqrt[3]{353} \approx 7.06$, որի հարյուրապատիկը «Միերի դռան» կրկնվող երկու տեքստերում խոյերի և ոչխարների ընդհանուրն է՝ 353 x 2 = 706:

Եզրակացություն

Որպես հավելում. ՄՀԵՐԻ ԴՌԱՆ արձանագրության մեջ եզակի դեմքով արական աստվածների համար սահմանված ցուլերի թվաքանակներն ըստ խմբերի ձևավորում են երեք խորանարդներ՝ 1^3, 3^3, 4^3, որոնց հարթապատկերային գծագիրը լիովին համապատասխանում է Վանի թագավորության Փաթնոսի, Կայահեդրեի, Չավուշթեփեի, Չավուշթեփե-Իրմուշինիի, Ալթինթեփեի, Այանիսի, Թոփրաքկալեի տաճարների հատակագծերին, որոնք մեկը մյուսի մեջ, մեծ և փոքր, հավասարաչափ կողմերով երկու քառակուսիների *(խորանարդների)* համադրությամբ կառույցներ են[2]:

«Հին բաբելացիներն ունեին **"X"** միավոր քառակուսու կողմի համար, որը կոչում էին **sidi,** և օգտագործում էին **mehr** տերմինը քառակուսու համար՝ X^2: Քառակուսու

[1] Տե՛ս Արթուր Արմին, «Հալդիի դարբասները», Երևան, 2020, էջ 14-17:

[2] Ali Çiçi. "The Socio-Economic Organization of the Urartian Kingdom", Brill, 2017, p. 227.

կողմը՝ sidi-ին քառակուսի բարձրացնելով, որոշվում էր mehr-ը՝ sidi² = mehr»[1] :

«Շումերական sid(i)-ն է, որն աղերսվում է ՀՆԽ՝ ***ստ, ըստ, իստ²,*** *արմատի հետ, հայերեն* ***«նիստ»*** *բառն է, իսկ* **mehr-ը, որի հոգնակին՝** *ՄԵՀՐՆԵՐ, հայերենում կլինի* ***«մեհրեան»,*** *որը հայերենի օրինաչափությամբ* ***«մեհեան»*** *բառն է»:*



Փաստորեն, ուրարտական տաճարների հատակագծերը՝ խորան, տաճար, համալիր, իրար մեջ երեք քառակուսիների ամբողջությունն է, որը հե՜նց ՄԵՀԵԱՆՆ է, և **«մեհեան»** բառի ստուգաբա-նությունը բխում է մաթեմատիկական այս տեր-մինաբանությունից, որտեղ հնդեվրոպական նախալեզվի ***meH-** «լուսին» ձևը նաև կիրառվել է որպես ժամանակի, ինչպես նաև տարածության չափման միավոր[3]:

РЕЗЮМЕ

Гематрия имен греческих богов четыре века назад: протокол "Мхери дран"

Артур Армин (Артур Бабаян)

Руководитель арменоведческого отдела исследовательского центра "Альтернатива"

В древности и в Шумере, и в Египте, и в Месопотамии, и в Древней Греции использовались определенные числа, объемы, календарные системы, математические и продольные закономерности, которые считались базовыми, а для храмов и сакральных сооружений их использование было обязательным (шаблонным) условием, вытекающим из религиозной глобализации. Числовые значения имен главных богов в гематрии Хуна-кан представлены в надписи «Мгери Дверь» Ванского царства более четырех веков назад как числа быков и баранов для жертвоприношений, которые окончательно раскрываются как математические и нумизматические дни лунного и солнечного года и закономерности, связанные с месяцами.

Числа быков, определенных как боги-мужчины с уникальным ликом в надписи МХЕРИ ДРАН по группам, образуют три куб-нарда: 13, 33, 43, плоскостной рисунок которых полностью соответствует Патносу, Каяхедре, Чавуштепе, Чавуште-пе- Ирму Ванского царства.Планы храмов Шини, Алтынтепе, Аянис, Топраккале, представляющих собой сооружения с сочетанием двух квадратов (ромбов) с равными сторонами, один внутри другого, большой и малый.

«Древние вавилоняне имели единицу измерения «X» для стороны квадрата, называемую сиди, и использовали термин «мехр» для обозначения квадрата, X2. Сторона квадрата,

[1] Teresi Dick, “Lost Discoveries”, New York, 2002, p. 50.

[2] Աճառյան Հ., ՀԱԲ, Երևան, 1971, հ.3, էջ 454:

[3] Gamkrelidze T., Ivanov V., “Indo-European and the Indo-Europeans”, Mouton de Gruyter, Berlin, New York, 1995, p. 591.

возведенная в квадрат sidi, определялась mehr: sidi2 = mehr.

Шумерское это sid(i), которое называется HNKH, с корнем st, согласно ist, есть армянское слово «сиденье», а mehr, множественное число которого MEHRNER, будет по-армянски «мехр-иан». , то есть слово «мехян» по правильности армянского.

На самом деле очертания урартских храмов - алтаря, храма, комплекса - представляют собой совокупность трех квадратов, что и есть МЕХЕАН, и этимология слова "мехиан" происходит от этого математического термина, где индоевропейское на- язык chale * Форма meH- «луна» также использовалась как единица измерения времени и пространства.

Ключевые слова: Дверь Мгера, Храм Греческая Гематрия Царство Вани Ворота Халди, Бык, Баран, Периметр

SUMMARY

Arthur Armin (Arthur Babayan)

Gematria of Greek Gods Names Four Centuries Ago: Protocol "Mheri Dran"

Alternative Research Center, Armenian Studies Department, Head

In ancient times, in Sumer, and in Egypt, and in Mesopotamia, and in Ancient Greece, certain numbers, volumes, calendar systems, mathematical and longitudinal patterns were used, which were considered basic, and for temples and sacred structures their use was a mandatory (template) condition stemming from religious globalization. The numerical values of the names of the main gods in the gematria of Huna-kan are presented in the inscription "Mheri Dver" of the Kingdom of Van more than four centuries ago as the numbers of bulls and rams for sacrifices, which are finally revealed as mathematical and numismatic days of the lunar and solar year and patterns associated with months.

The numbers of the bulls defined as male gods with a unique face in the MHERI DRAN inscription by groups form three cube-nards: 13, 33, 43, the planar drawing of which fully corresponds to Patnos, Kayahedre, Chavushtepe, Chavushte-pe-Irmu of the kingdom of Van. The plans of Shini, Altintepe, Ayanis, Toprakkale temples, which are structures with the combination of two squares (diamonds) with equal sides, one inside the other, big and small.

"The ancient Babylonians had an 'X' unit for the side of a square, called sidi, and used the term mehr for a square, X2. The side of the square, by squaring sidi, was determined by mehr: sidi2 = mehr.

Sumerian is sid(i), which is called HNKH, with the root st, according to, ist, is the Armenian word "seat", and mehr, the plural of which is MEHRNER, will be "mehr-ian" in Armenian. , which is the word "mehian" according to the regularity of Armenian.

In fact, the outlines of the Urartian temples - altar, temple, complex - are the totality of three squares, which is exactly MEHEAN, and the etymology of the word "mehian" derives from this mathematical term, where the Indo-European Na-chale language * The form meH- "moon" was also used as a unit of measurement of time as well as space.

Keywords` Door of Mher, Temple Greek Gematria Kingdom of Vani Khaldi Gate, Bull, Ram, Perimeter.